ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 112

ք. Երևան 01.04.2024թ.

ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-20/4» ծածկագրով մրցույթին /այսուհետև՝ Մրցույթ/ 2-րդ չափաբաժնի մասով ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Յունիմայն» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում արձանագրել է հետևյալը՝

- «Յունիմայն» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում հավելված 1.1-ում 2-րդ չափաբաժնի մասով նշված է / վառելիքի ծախսը -50% ծանրաբեռնվածության դեպքում առավելագույնը -2,8 լիտր (ժամում)/, այնինչ Մրցույթի հրավերով պահանջվում է /վառելիքի ծախսը 75% ծանրաբեռնվածության դեպքում՝ ոչ ավել 3,2 լիտր (ժամում)/:

ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և Մրցույթի հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը «Յունիմայն» ՍՊԸ-ին առաջարկել է շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել հրավերի պայմաններին համապատասխանող տեխնիկական բնութագիր:

«Յունիմայն» ԱՊԸ-ն սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին ուղարկել է անհամապատասխանության շտկումը, որը քննարկվել է հանձնաժողովի կողմից և պարզվել, որ մասնակցի կողմից ներկայացրած փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Յունիմայն» ԱՊԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:

Հաշվի առնելով, որ «Յունիմայն» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Յունիմայն» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ